



- Դիմակների, ներառյալ շնչառական սարքերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ [ph.lacounty.gov/masks](https://www.dir.ca.gov/masks) :
- Cal/OSHA-ի կանոնների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.htm>
- Վճարովի արձակուրդի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [https://www.dir.ca.gov/dlse/ COVID19Resources/2022-SPSL-FAQs.html](https://www.dir.ca.gov/dlse/COVID19Resources/2022-SPSL-FAQs.html)
- Եթե կորցրել եք ձեր աշխատանքը կամ ձեր աշխատանքային օրը կրճատվել է COVID-19-ի պատճառով, դուք կարող եք իրավասու լինել ստանալ գործազրկության ապահովագրության նպաստներ: Դիմելու համար այցելեք՝ [https://www.edd.ca.gov/about\\_edd/coronavirus-2019/workers.htm](https://www.edd.ca.gov/about_edd/coronavirus-2019/workers.htm)
- Գործատուի և կառավարության կողմից տրամադրվող լրացուցիչ արձակուրդի նպաստների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, որին դուք կարող եք իրավասու լինել, այցելեք՝ [https://www.saferatwork.la/ employees](https://www.saferatwork.la/employees)
- Cal/OSHA-ին բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [https:// www.dir.ca.gov/covid/workplace-issues.html](https://www.dir.ca.gov/covid/workplace-issues.html)
- Կարի արտադրության, սննդամթերքի արտադրության, պահեստների և պահեստավորման, ռեստորանների, ինչպես նաև վթերային խանութների և սուպերմարկետների սպասարկող աշխատողների համար այցելեք Հանրային Առողջության Խորհրդի կայք՝ [http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/ phcouncils/index.htm](http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/phcouncils/index.htm) :

**Եթե COVID-19-ով վարակվելու ռիսկը ծանր  
ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ԿՏԱՆԳԸ ՁԵՉ ՀԱՄԱՐ ԱՎԵԼԻ  
ՄԵԾ Է, ՄՏԱԾԵՔ ՀԵՏԱՅԱԼ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ,  
ՈՐՊԵՍՁԻ ԻՆՔՆԵՐԴ ԶԵՉ ՊԱՇՏՊԱՆԵՔ  
ԱՃՆԱՏԱՎԱՅՐՈՒՄ**



Եթե COVID-19-ով վարակման ռեպրոմ ծանր հիվանդանու վտանգը ձեզ համար ավելի մեծ է, մտածեք հետևյալ քայլերի մասին, որպեսզի ինքներդ ձեզ պաշտպանեք աշխատավայրում.

- 1) Ձեր գործատուից պահանջեք շնչառական դիմակ (respirator): Մշտապես կրեք այն փակ տարածքներում ուրիշների շրջապատում կամ ուրիշների հետ փոխադրամիջոցում գտնվելիս: Եթե չեք կարողանում կրել շնչառական դիմակ, փորձեք կրել «կրկնակի դիմակ» (վիրաբուժական դիմակի վրայից կրեք դեմքը լավ գրկող կտորե դիմակ):
- 2) Ուրիշներից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն, եթե ձեր աշխատանքային պայմանները դա թույլ են տալիս:
- 3) Ընդմիջումներին, երբ դուք պետք է հանեք ձեր դիմակը ուտելու կամ խմելու համար, փորձեք դա անել բացօթյա տարածքում և հեռու ուրիշներից: Եթե դուք պետք է ուտեք փակ տարածքում այլ անձանց շրջապատում, բացեք պատուհանները և դռները և հնարավորինս հեռավորություն պահպանեք ուրիշներից:
- 4) Բացեք պատուհանները կամ դռները ձեր աշխատանքային տարածքում, եթե դա անվտանգ է: Թարմ օդն օգնում է նվազեցնել օդում կաթիլների քանակը՝ նվազեցնելով COVID-19-ով վարակվելու վտանգը:
- 5) Եթե դուք վարակվեք COVID-19-ով, դուք կարող եք ձեռք բերել դեղամիջոցներ, որոնք բուժում են COVID-19-ը և օգնում են ձեզ չհայտնվել հիվանդանոցում: Այս դեղերը լավագույնս գործում են, երբ դրանց ընդունումը սկսվում է COVID-19-ով վարակվելուց հետո հնարավորինս շուտ և 5-7 օրվա ընթացքում կախված դեղամիջոցից: Խոսեք ձեր բժշկի հետ կամ զանգահարեք (833) 540-0473 հեռախոսահամարով: Իմացեք ավելին՝ [ph.lacounty.gov/covidmedicines](https://www.dir.ca.gov/covidmedicines) կայքէջում:

Աշխատողների իրավունքների մասին գրքուկի բովանդակություն: Ներկայումս տեղադրված է այստեղ՝ [http://publichealth.lacounty.gov/ media/Coronavirus/docs/business/Workers\\_Rights\\_Pamphlet.pdf](http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/business/Workers_Rights_Pamphlet.pdf) :



# COVID-19 պաշտպանություն . աշխատողների իրավունքները Կալիֆորնիայում

Los Angeles County  
Department of Public Health  
[www.publichealth.lacounty.gov](https://www.publichealth.lacounty.gov)  
10/3/22 (Armenian)



**COVID-19-ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ.  
ԱՃԻԱՏԱՌՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ**



Ըստ Cal/OSHA-ի՝ ձեր գործատուն պարտավոր է քայլեր ձեռնարկել ձեզ COVID-19-ից պաշտպանելու համար: Ծանաչեք ձեր իրավունքները և տեղեկացրեք խախտումների մասին հետևյալ կերպ.

- Չրուցեք Ձեր միության ներկայացուցչի հետ:
- Բողոք ներկայացրեք Cal/OSHA-ին՝ զանգահարելով 833-579-0927 հեռախոսահամարով:
- Բողոք ներկայացրեք Հանրային Առողջության Վարչությանը՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը: Դուք կարող եք ձեր բողոքը ներկայացնել անանու:



**ԱՃԻԱՏԱՌՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

- Ձեր գործատուն պետք է ունենա աշխատավայրում COVID-19-ի տարածումը կանխելու ծրագիր: Նրանք պետք է ապահովեն բոլոր աշխատողների վերապատրաստումը COVID-19 կանխարգելման ծրագրի և նրանց իրավունքների վերաբերյալ՝ համաձայն նահանգային CAL/OSHA կանոնների:



**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ  
(ԿԱՄ «PPE»)**

- Եթե դուք աշխատեում եք փակ տարածքում՝ այլ մարդկանց հետ, կամ աշխատում եք փոխադրամիջոցում մեկից ավելի մարդկանց հետ՝ գործատուն պետք է ձեզ առաջարկի համապատասխան դիմակներ և շնչառական սարքեր: Եթե դուք խնդրում եք ձեզ տրամադրել N95 (NIOSH-ի կողմից հավաստագրված) շնչառական միջոցներ ապա ձեր գործատուն պետք է տրամադրի դրանք՝ ճիշտ չափսերով, ինչպես նաև պետք է տրամադրի հիմնական հրահանգները, թե ինչպես պետք է դրանք օգտագործել:
- Ինչպես գործատուների անվտանգության բոլոր պահանջների դեպքում, դիմակների և շնչառական սարքերի (respirators) արժեքը չպետք է փոխանցվի աշխատողներին: Սա նշանակում է, որ ձեր գործատուն պետք է ձեզ դիմակներ կամ շնչառական սարքեր տա կամ դրանք փոխարինի անվճար:
- Ձեր գործատուն չի կարող խանգարել ձեզ, կամ վրեժխնդիր լինել ձեզից՝ աշխատավայրում դիմակ կրելու համար:
- Թեև բոլոր դիմակներն ապահովում են պաշտպանության որոշակի մակարդակ, դեմքին ամուր նստող շնչառական սարքերը, հատկապես N95-ները, ապահովում են լավագույն պաշտպանությունը:
- Ձեր շնչառական սարքը (respirator) պետք է փոխարինվի, եթե այն վնասվել է, ձևափոխվել, թրջվել, կեղտոտվել, շնչելը դժվարացրել, կամ եթե այն այլևս լավ չի փակում դեմքը: Եթե դուք օգտագործում եք շնչառական սարքեր, ստուգեք արտադրողի ցուցումները՝ իմանալու համար, թե որքան ժամանակ կարող եմ դրանք կրել՝ նախքան դրանք դնել նետել: Բժշկական դիմակները մեկ անգամ կրելուց հետո անհրաժեշտ է դնել նետել:

**Ձեռքերի Լվաճառ Ժամկետներ Եվ Պարզվածներ**



- Գործատուները պետք է ապահովեն ձեռքերը լվանալու հարմարանքներով, որոնք պետք է հաճախ լվանալ և ջրով և/կամ ձեռքերը ախտահանող միջոցներով: Դրանք պետք է տեղադրված լինեն ձեր աշխատավայրում և ցանկացած փոխադրամիջոցում, որը դուք կարող եք վարել:
- Գործատուները նաև պետք է ձեզ բավարար ժամանակ հատկացնեն աշխատանքային օրվա ընթացքում ձեռքերը լվանալու կամ ախտահանելու համար:

**COVID-19  
ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ**



- Գործատուները պետք է առաջարկեն աշխատանքային և անվճար թեստավորում ժամերին ցանկացած աշխատողի, ով՝
  - o Ունի COVID-19-ի ախտանիշներ
  - o Աշխատանքի վայրում սերտ կապ է ունեցել COVID-19-ի վարակարի հետ կամ կարող է շփում ունեցած լինել աշխատավայրում բնակման ժամանակ, բացառությամբ նրանց, ովքեր ապաքինվել են COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ:
  - o Կարիք ունի թեստավորման՝ աշխատավայրում շփվելուց հետո աշխատելու կամ մեկուսացման ժամանակ ավելի շուտ աշխատանքի վերադառնալու համար:
- Թեստավորումը կարող է կատարվել ձեր գործատուի միջոցով, ձեր բժշկի գրասենյակում կամ բժշկական կենտրոնում, տեղական առողջապահական բաժանմունքում կամ համայնքային թեստավորման կենտրոնում: Ձեր գործատուն պետք է հոգա ձեր բոլոր թեստավորման ծախսերը, ներառյալ՝ վճարել ձեր աշխատավարձը՝ ձեր թեստավորման ժամանակի համար (ներառյալ թեստավորման վայր գնալու և գալու ժամանակի համար): Նրանք պետք է նաև փոխհատուցեն ձեզ թեստավորման ճանապարհածախսի համար (օրինակ՝ մեքենայի մղումները (mileage) կամ հասարակական տրանսպորտը):

**ՎՃԱՐՈՎԻ  
ԱՐՁԱՎՈՒՐ**



- Ձեր գործատուն պետք է վճարի ձեր բացակայության համար (հայտնի է որպես ազատման վճար (exclusion pay)), եթե ձեզ խնդրել են աշխատել տևից, քանի որ դուք վարակվել եք COVID-19 կամ աշխատանքի ժամանակ շփում եք ունեցել COVID-19-ի հետ: Նրանք պետք է ձեզ վճարեն ձեր սովորական աշխատավարձի չափով այն ժամանակահատվածի համար, երբ ձեզից պահանջվում է մնալ տանը:
- Հնարավոր է, որ դուք նաև կարողանաք վճարվել աշխատանքից բացակայելու համար COVID-19-ի Հիվանդության հիմքով լրացուցիչ վճարովի արձակուրդի ծրագրի միջոցով՝ COVID-19-ի դեմ պատվաստվելու, պատվաստանյութերի հետ կապված ախտանիշներից ապաքինվելու համար, կամ եթե անհրաժեշտ է հոգ տանել ընտանիքի անդամի մասին, որն ունի COVID-19 կամ կարանտինի կարիք : Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս COVID-19 հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի մասին պատասառը և հաճախակի տրվող հարցերը:

**ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ, ԵԹԵ ԱՃԻԱՏԱԿԱՅՐՈՒՄ COVID-19-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՇԻ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՄ:**

- Չրուցեք Ձեր միության ներկայացուցչի հետ:
- Բողոք ներկայացրեք՝ զանգահարելով Cal/OSHA-ին՝ 833-579-0927 համարին:
- Բողոք ներկայացրեք Հանրային Առողջության Պատասխանատուին՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարին: Դուք կարող եք ներկայացնել ձեր բողոքը անանուն կերպով:

